ՔԱՂՎԱԾՔ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ* №1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ	ConverseBank	EXTRACT FROM "CONVERSE BANK" CJSC *GENERAL ANNUAL* MEETING MINUTES №1

ք. Երևան 19-ը հունիսի, 2019թ.	Yerevan June 19, 2019
2019թ. հունիսի 19-ին, ժամը 16:30-ին "Կոնվերս Բանկ" փակ բաժնետիրական ընկերության գտնվելու վայրում՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Վ. Սարգսյանի փողոց, 26/1 հասցեում տեղի ունեցավ "Կոնվերս Բանկ" փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը (հետագայում՝ Ընդհանուր ժողով): Ժողովին մասնակցել են ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերեր.	The Annual General Shareholder Meeting of Converse Bank closed joint stock company (hereinafter the General Meeting) was held on June 18, 2018, 16:30 at Converse Bank CJSC: 26/1 Vazgen Sargsyan Street, Republic Square, Yerevan, Armenia. The meeting was attended by the following shareholders eligible for participation in the General Meeting:
• "Ադվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս" ԷԼԷԼՍԻ՝ **44,293** ձայնի իրավունքով, ի դեմս տնօրեն Ջուան Պաբլո Գեչիդջյանի, • "Հայփոստ Թրասթ Մենեջմենթ" Բի Վի-ին՝ **7,693** ձայնի իրավունքով, ի դեմս տնօրեն Ջուան Պաբլո Գեչիդջյանի, • Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ **2,736** ձայնի իրավունքով, ի դեմս լիազորված անձ Արսեն Գամաղելյանի (Տեր Հովել քահանա):	• Advanced Global Investments LLC, represented by Director Juan Pablo Gechidjian with **44,293** votes; • Haypost Trust Management B.V. represented by Director Juan Pablo Gechidjian with **7,693** votes; • The Armenian Saint Apostolic Church, represented by Arsen Gamaghelyan (Ter Hovel Archpriest) with **2,736** votes.
Ժողովի մասին ծանուցված էին.	The below listed parties were notified about the Meeting:
• "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Խորհրդի նախագահն ու անդամները, • "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Գլխավոր գործադիր տնօրեն, Տնօրինության նախագահը,	• Chairman and members of Converse Bank CJSC Board, • Converse Bank CJSC CEO/Chairman of Executive Management,

ՔԱՂՎԱԾՔ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ* №1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ	ConverseBank	EXTRACT FROM "CONVERSE BANK" CJSC *GENERAL ANNUAL* MEETING MINUTES №1

- "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահը,
- "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները,
- ՀՀ Կենտրոնական Բանկը,
- Բանկի՝ հաշվետու տարվա արտաքին աուդիտ իրականացնող անձի ղեկավարը,

որոնցից Ժողովի նիստին ներկա էին՝

- "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Խորհրդի նախագահ Արմեն Տեր-Տաճատյանը,
- "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Խորհրդի անդամներ Ջուան Պաբլո Գեչիդջյանը, Արսեն Գամաղելյանը (Տեր Հովել քահանա), Խոսե Լուիս Պերսիկոն (մասնակցել է հեռուստակապի միջոցով իրական ժամանակի ռեժիմում), Խորխե Ալբերտո Դել Ագիլան (մասնակցել է հեռուստակապի միջոցով իրական ժամանակի ռեժիմում), Խուան Կարլոս Օսկոիդին (մասնակցել է հեռուստակապի միջոցով իրական ժամանակի ռեժիմում),
- "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Գլխավոր գործադիր տնօրեն, Տնօրինության նախագահ Արթուր Հակոբյանը,

- Head of Converse Bank CJSC Accounting Department / Chief Accountant,
- Converse Bank CJSC Head and members of Internal Audit,
- The Central Bank of Armenia,
- External Auditor of the Bank for the reporting year.

Of the above mentioned, the following persons attended the Meeting:

- Armen Ter-Tachatyan, Chairman of "Converse Bank" CJSC Board,
- Juan Pablo Gechidjian, Arsen Gamaghelyan (Ter Hovel Archpriest), Jose Luis Persico participated via video conference in real time), Jorge Alberto Del Aguila participated via video conference in real time), Juan Carlos Ozcoidi participated via video conference in real time), Converse Bank CJSC Board Members;
- Artur Hakobyan, "Converse Bank" CJSC CEO/Chairman of Executive Management;

ՔԱՂՎԱԾՔ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ* №1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ	ConverseBank	EXTRACT FROM "CONVERSE BANK" CJSC *GENERAL ANNUAL* MEETING MINUTES №1

• "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Գործառնությունների, ծառայությունների և SS գծով տնօրեն Գոհար Հարությունյանը, • "Կոնվերս Բանկ" ՓԲԸ ֆինանսական տնօրեն Հրանտ Հակոբյանը, • "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահ Դավիթ Ազատյանը, • "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Ներքին աուդիտի ղեկավար Կարեն Ղահրամանյանը, • ՀՀ ԿԲ լիազոր ներկայացուցիչներ Վաղինակ Եղիազարյանը և Արթուր Դավթյանը, • Բանկի՝ հաշվետու տարվա արտաքին աուդիտ իրականացնող անձ "Էրնսթ ընդ Յանգ" ՓԲԸ-ի ներկայացուցիչներ Ելենա Ադամյանը և Յանա Ոսկանովան:	• Gohar Harutyunyan, Operations, Services and IT Director; • Grant Akopian, Financial Director of Converse Bank CJSC; • Davit Azatyan, Head of Converse Bank CJSC Accounting Division / Chief Accountant; • Karen Ghahramanyan, Head of Converse Bank CJSC Internal Audit Department • Vaghinak Yeghiazaryan and Artur Davtyab, CBA authorized representatives; • Yelena Adamyan and Yana Vokanova, representative of Ernst & Young CJSC, the External Auditor of the Bank for the reporting year.
Հաշվի առնելով, որ "Կոնվերս Բանկ" ՓԲԸ տեղաբաշխված քվեարկող հասարակ (սովորական) բաժնետոմսերի ձայների գումարային քանակը կազմում է 54,722 ձայն, իսկ Ընդհանուր ժողովին մասնակցող բաժնետերերին պատկանող ձայների գումարը հավասար է 54,722 ձայնի՝ հետևաբար "Բաժնետիրական ընկերությունների մասին" ՀՀ օրենքի 77 հոդվածի համաձայն Ընդհանուր ժողովը համարվեց իրավասու և հայտա-	Whereas the total number of allocated common (ordinary) voting shares of Converse Bank CJSC amounted to 54,722 and the total number of votes owned by shareholders participating in the General Meeting equaled 54,722, therefore the General Meeting was deemed valid under the RA Law on Joint Stock Companies – Article 77, and was declared open.

ՔԱՂՎԱԾՔ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ* №1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ	ConverseBank	EXTRACT FROM "CONVERSE BANK" CJSC *GENERAL ANNUAL* MEETING MINUTES №1

բարվեց բացված: Ընդհանուր ժողովը նախագահում էր Արմեն Տեր-Տաճատյանը, իսկ ժողովի քարտուղարն էր "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Աշխատակազմի Գրասենյակային գործառնությունների բաժնի պետ Լիլիթ Սարգսյանը:	Mr. Armen Ter-Tachatyan presided at the General Meeting and Ms. Lilit Sargsyan, the Head of Converse Bank CJSC Staff Office Operations Unit, was the Secretary of the Meeting.
ՕՐԱԿԱՐԳ 2. "Կոնվերս Բանկ" փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված շահույթների բաշխման մասին: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին:	AGENDA 2. Allocation of profit earned by Converse Bank closed joint stock company due to 2018 financial activities; Payment of annual dividends
2-ՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ *"Կոնվերս Բանկ" փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված շահույթների բաշխման մասին: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին:* Զեկուցեց՝ Արմեն Տեր-Տաճատյանը "Կոնվերս Բանկ" փակ բաժնետիրական ընկերության 2018թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված շահույթների բաշխման, տարեկան շահութաբաժինների վճարման մասին:	WITH REGARD TO ITEM 2 *Allocation of profit earned by Converse Bank closed joint stock company due to 2018 financial activities; Payment of annual dividends* Reported by Armen Ter-Tachatyan: Allocation of profit earned by Converse Bank closed joint stock company due to 2018 financial activities; Payment of annual dividends.

ՔԱՂՎԱԾՔ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ* №1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ	ConverseBank	EXTRACT FROM "CONVERSE BANK" CJSC *GENERAL ANNUAL* MEETING MINUTES №1

"Կոնվերս Բանկ" ՓԲԸ Հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահ Դավիթ Ազատյանը ներկայացրեց, որ "Կոնվերս Բանկ" փակ բաժնետիրական ընկերության 2018թ. ֆինանսական տարվա արդյունքներով Բանկի զուտ շահույթը համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կազմել է 4,895մլն. ՀՀ դրամ, իսկ կուտակային շահույթը 01/01/2019թ. դրությամբ՝ 15,947մլն. ՀՀ դրամ:	Davit Azatyan, Head of Accounting Division/Chief Accountant of Converse Bank CJSC informed that according to Converse Bank close joint stock company's results for 2018 financial year, the Bank's net profit made AMD 4,895 M, and the accumulated earnings amounted to AMD 15,947 M as of 01/01/2019 based on the International Financial Reporting Standards.
Բանկի 2018թ. զուտ շահույթը ՀՀ Կենտրոնական Բանկի կանոնակարգերի և այլ իրավական ակտերի համաձայն կազմել է 4,502մլն. ՀՀ դրամ, իսկ կուտակային շահույթը 01/01/2019թ. դրությամբ՝ 13,039մլն. ՀՀ դրամ:	The Bank's 2018 net profit comprised AMD 4,502 M and the accumulated earnings amounted to AMD 13,039 M as of 01/01/2019 based on the regulations and other bylaws of the Central Bank of Armenia.
Դավիթ Ազատյանը ներկայացրեց "Կոնվերս Բանկ" ՓԲԸ բաժնետերերին վճարվելիք շահութաբաժինների հաշվարկը:	Davit Azatyan presented the calculation of dividends payable to the shareholders of Converse Bank CJSC.
Ելույթ ունեցավ "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Խորհրդի նախագահ Արմեն Տեր-Տաճատյանը և ներկայացրեց "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Խորհրդի առաջարկը՝ "Բանկերի և բանկային գործունեության մասին" ՀՀ օրենքի և Բանկի կանոնադրության 8-րդ հոդվածի, ՀՀ	Chairman of Converse Bank CJSC Board Armen Ter-Tachatyan took the floor and presented the recommendation made by the Board of Converse Bank CJSC: based on the RA Law on Banks and Banking Activities and the Bank's Charter Article 8, and the regulations and other bylaws of the Central

ՔԱՂՎԱԾՔ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ* №1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ	ConverseBank	EXTRACT FROM "CONVERSE BANK" CJSC *GENERAL ANNUAL* MEETING MINUTES №1

Կենտրոնական Բանկի կանոնակարգերի և այլ իրավական ակտերի պահանջների համաձայն, նախորդ ֆինանսական տարիների չբաշխված զուտ շահույթի կուտակային գումարի / 13,038,783 հազ. ՀՀ դրամ/ մի մասը՝ 6.52%-ը կամ 850,384,042 ՀՀ դրամը որպես շահութաբաժիններ վճարել բաժնետերերին, որից 850,377,442 ՀՀ դրամը՝ սովորական բաժնետոմսերի դիմաց, իսկ 6,600 ՀՀ դրամը՝ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, համապատասխանաբար՝	Bank of Armenia, pay a part of the net retained earnings (AMD 13,038,783 K) accumulated in the past financial years – 6.52% or AMD 850,384,042, as dividends to shareholders, of which AMD 850,377,442 against ordinary shares and AMD 6,600 against preference shares; accordingly:
1.**"Ադվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս" ԷԼԷԼՍԻ-ին՝** ➢ 688,311,247 ՀՀ դրամ՝ սովորական բաժնետոմսերի դիմաց, վճարումը կատարել մինչև 19.12.2019թ-ը ներառյալ; ➢ 6,600 ՀՀ դրամ՝ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, վճարումը կատարել մինչև 19.08.2019թ.-ը ներառյալ;	1. **To Advanced Global Investments LLC** ➢ AMD 688,311,247 against ordinary shares; make the payment through 19.12.2019; ➢ AMD 6,600 against preference shares; make the payment through 19.08.2019
2. **"Հայփոստ Թրասթ Մենեջմենթ" Բի Վի-ին՝** 119,548,877 ՀՀ դրամ սովորական բաժնետոմսերի դիմաց, վճարումը կատարել մինչև 19.12.2019թ-ը ներառյալ;	2. **To Haypost Trust Management BV** AMD 119,548,877 against ordinary shares; make the payment through 19.12.2019
3. **Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն՝** 42,517,318 ՀՀ դրամ սովորական բաժնետոմսերի	3. **To the Armenian Saint Apostolic Church** AMD 42,517,318 against the ordinary shares; make the payment through 19.12.2019

դիմաց, վճարումը կատարել մինչև 19.12.2019թ-ը ներառյալ /ցուցակը կցվում է/:

(the list is attached).

Արմեն Տեր-Տաճատյանը առաջարկեց նաև "Կոնվերս Բանկ" ՓԲԸ ՀՀ Կենտրոնական Բանկի կանոնակարգերի և այլ իրավական ակտերի համաձայն կազմված ֆինանսական հաշվետվությունների նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով զուտ շահույթի գումարի 20%-ը՝ 900,480,400 ՀՀ դրամը հատկացնել գլխավոր պահուստին, իսկ մնացածը "Կոնվերս Բանկ" ՓԲԸ զարգացման նպատակով թողնել չբաշխված շահույթի հաշվին:

Armen Ter-Tachatyan also proposed allocating 20% of Converse Bank CJSC's net profit based on the results of the previous financial year disclosed in the financial statements under the regulations and other bylaws of the Central Bank of Armenia, i.e. AMD 900,480,400 to the main reserve, and keep the remaining part on the account of retained earnings for the purpose of development of Converse Bank CJSC.

Ելույթ ունեցան "Ադվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս" ԷԼԷԼՍԻ և "Հայփոստ Թրասթ Մենեջմենթ" Բի Վի-ի տնօրեն Ջուան Պաբլո Գեչիդջյանը, Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու լիազոր անձ Արսեն Գամաղելյանը (Տեր Հովել քահանա) և հայտնեցին իրենց համաձայնությունը բաժնետերերին շահութաբաժիններ վճարելու առաջարկի հետ:

Juan Pablo Gechidjian, the director of Advanced Global Investments LLC and Haypost Trust Management BV, and Arsen Gamaghelyan (Ter Hovel Archpriest), the representative of the Armenian Saint Apostolic Church took the floor and expressed their assent to the proposed payment of dividends to shareholders.

Որոշեցին՝

Resolution

1. 2018թ. "Կոնվերս Բանկ" ՓԲԸ զուտ շահույթը

1. Accept Converse Bank CJSC's net profit for

ՔԱՂՎԱԾՔ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ* №1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ	ConverseBank	EXTRACT FROM "CONVERSE BANK" CJSC *GENERAL ANNUAL* MEETING MINUTES №1

համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, ընդունել 4,895 մլն. ՀՀ դրամ, իսկ համաձայն ՀՀ Կենտրոնական Բանկի կանոնակարգերի և այլ իրավական ակտերի՝ 4,502մլն. ՀՀ դրամ: "Կոնվերս Բանկ" ՓԲԸ կուտակային շահույթը 01/01/2019թ. դրությամբ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, ընդունել 15,947մլն. ՀՀ դրամ, ՀՀ Կենտրոնական Բանկի կանոնակարգերի և այլ իրավական ակտերի համաձայն՝ 13,039մլն. ՀՀ դրամ:	2018 financial year AMD 4,895 M based on the International Financial Reporting Standards, and AMD 4,502 M based on the regulations and other bylaws of the Central Bank of Armenia. Accept Converse Bank CJSC's accumulated earnings as of 01/01/2019 AMD 15,947 M based on the International Financial Reporting Standards, and AMD 13,039 M based on the regulations and other bylaws of the Central Bank of Armenia.
2. Համաձայն ՀՀ Կենտրոնական Բանկի կանոնակարգերի և այլ իրավական ակտերի նախորդ ֆինանսական տարիների չբաշխված զուտ շահույթի կուտակային գումարի 13,038,783 հազ. ՀՀ դրամ/ մի մասը՝ 6.52%-ը կամ 850,384,042 ՀՀ դրամը որպես շահութաբաժիններ վճարել բաժնետերերին, որից 850,377,442ՀՀ դրամը՝ սովորական բաժնետոմսերի դիմաց, իսկ 6,600 ՀՀ դրամը՝ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, համապատասխանաբար՝	2. Based on the regulations and other bylaws of the Central Bank of Armenia, pay a part of the retained net earnings (AMD 13,038,783 K) accumulated in the past financial years – 6.52% or AMD 850,384,042, as dividends to shareholders, of which AMD 850,377,442 against ordinary shares and AMD 6,600 against preference shares; accordingly:
1) "Ադվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս" ԷԼԷԼՍԻ-ին՝ ➢ 688,311,247 ՀՀ դրամ սովորական բաժնետոմսերի դիմաց, վճարումը կատարել մինչև 19.12.2019թ-ը ներառյալ; ➢ 6,600 ՀՀ դրամ՝ արտոնյալ	1) To Advanced Global Investments LLC ➢ AMD 688,311,247 against ordinary shares; make the payment through 19.12.2019; ➢ AMD 6,600 against preference shares;

ՔԱՂՎԱԾՔ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ* №1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ	ConverseBank	EXTRACT FROM "CONVERSE BANK" CJSC *GENERAL ANNUAL* MEETING MINUTES №1

բաժնետոմսերի դիմաց, վճարումը կատարել մինչև 19.08.2019թ.-ը ներառյալ;	make the payment through 19.08.2019
2) "Հայփոստ Թրասթ Մենեջմենթ" Բի Վի-ին՝ 119,548,877 ՀՀ դրամ սովորական բաժնետոմսերի դիմաց, վճարումը կատարել մինչև 19.12.2019թ-ը ներառյալ;	2) To Haypost Trust Management BV AMD 119,548,877 against ordinary shares; make the payment through 19.12.2019
3) Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն՝ 42,517,318 ՀՀ դրամ սովորական բաժնետոմսերի դիմաց, վճարումը կատարել մինչև 19.12.2019թ-ը ներառյալ /ցուցակը կցվում է/:	3) To the Armenian Saint Apostolic Church AMD 42,517,318 against the ordinary shares' make the payment through 19.12.2019 (the list is attached).
3."Կոնվերս Բանկ" ՓԲԸ ՀՀ Կենտրոնական Բանկի կանոնակարգերի և այլ իրավական ակտերի համաձայն կազմված ֆինանսական հաշվետվությունների նախորդ ֆինանսական տարվա զուտ շահույթի գումարի 20%-ը 900,480,400 ՀՀ դրամը հատկացնել պահուստային հիմնադրամին /գլխավոր պահուստին/, իսկ մնացածը "Կոնվերս Բանկ" ՓԲԸ զարգացման նպատակով թողնել չբաշխված շահույթի հաշվին:	3. Allocate 20% of Converse Bank CJSC's net profit based on the results of the previous financial year disclosed in the financial statements under the regulations and other bylaws of the Central Bank of Armenia, i.e. AMD 900,480,400 to the reserve fund (main reserve), and keep the remaining part on the account of retained earnings for the purpose of development of Converse Bank CJSC.
4.Հաստատել "Կոնվերս Բանկ" փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի միջև շահութաբաժինների բաշխման մասին ցուցակը /կցվում է/:	4. Approve the list of distribution of dividends among the shareholders of Converse Bank closed joint stock company (attached).

ՔԱՂՎԱԾՔ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ* №1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ	ConverseBank	EXTRACT FROM "CONVERSE BANK" CJSC *GENERAL ANNUAL* MEETING MINUTES №1

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:	5. The Resolution shall come into effect from the date of adoption.
Կողմ՝ 54,722 ձայն	Pro: 54,722 votes
Դեմ՝ 0 ձայն	Con: 0 votes
Չեռնպահ՝ 0 ձայն	Abstained: 0 votes

ՔԱՂՎԱԾՔՆ ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է

EXTRACT IS TRUE TO THE ORIGINAL

ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ,
ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ՀԱԿՈԲՅԱՆ

CHIEF EXECUTIVE OFFICER/CHAIRMAN OF EXECUTIVE MANAGEMENT ARTHUR HAKOBYAN

ConverseBank	ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ	**Հաստատված է** “Կոնվերս Բանկ” ՓԲԸ Բաժնետերերի տարեկան Ընդհանուր ժողովի 19.06.19թ. որոշմամբ /թիվ 1 արձանագրության 2-րդ հարց/ Ժողովի նախագահ՝ Արմեն Տեր-Տաճատյան

Ց Ու Ց Ա Կ
“Կոնվերս Բանկ” փակ բաժնետիրական ընկերության 2018թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում բաժնետերերի միջև շահաբաժինների բաշխման մասին

ՀՀ դրամ

Ազգանուն, անուն	Կանոնադրական կապիտալում ներդրված գումար	Բաժնետոմսերի տեսակները	Վճարման ենթակա շահութաբաժին
Advanced Global Investments LLC	13,287,900,000	Սովորական	688,311,247
	33,300.00	Արտոնյալ	6,600
	13,287,933,300		688,317,847
“Հայփոստ Թրասթ Մենեջմենթ” Բի Վի-ի	2,307,900,000	Սովորական	119,548,877
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	820,800,000	Սովորական	42,517,318
Ընդամենը	16,416,633,300		**850,384,042**

ConverseBank	***GENERAL ANNUAL MEETING OF CONVERSE BANK CLOSED JOINT-STOCK COMPANY SHAREHOLDERS***	**Approved** Based on Converse Bank CJSC Annual General Meeting of Shareholders of Resolution at 19.06.2019 (Minutes #1 Item 2) Armen Ter-Tachatyan Chairman of Meeting

The LIST
of 2018Y Performance Dividends
Distributed between the Converse Bank Closed Joint-Stock Company Shareholders

AMD

Name	Equity participation	Type of share	Dividends payable
Advanced Global Investments LLC	13,287,900,000	Ordinary	688,311,247
	33,300.00	Preference	6,600
	13,287,933,300		688,317,847
Haypost Trust Management B.V.	2,307,900,000	Ordinary	119,548,877
Mother See of Holy Etchmiadzin	820,800,000	Ordinary	42,517,318
Total	16,416,633,300		**850,384,042**